ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՄՅԱՍՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1929—1932 թվականները կուսակցության պատմության մեջ բնութագրվում են որպես ամբողջ ճակատով սոցիալիզմի ծավալուն հարձակման, առաջին հնգամյա պլանի հաջող կատարման ժամանակաշրջան։ Սովետական ժողովուրդը հայրենանվեր աշխատանքով քայլ առ քայլ երկրի արդյունաբերությունը դնում էր ինդուստրացման ուղու վրա։ Սակայն գյուղական մանր, ցաքուցրիվ տնտեսությունները կաշկանդում էին ժողովրդական տնտեսության զարգացումը, ուստի և նրանց սոցիալիստական վերակառուցումը դարձավ տնտեսական ու քաղաքական կարևորագույն խնդիր։

1929 թ. աշնանը, երբ երկրում ծավալվել էր համատարած կոլտնտեսային շարժումը, կուսակցությունն առաջ քաշեց գյուղի համար ամենատարբեր մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման հրատապ խնդիրը, որպես գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և գյուղում կուլտուրական հեղափոխության հաղթանակի ապահովման վճռական գործոն։ Այս առումով կարևոր նշանակություն ունեցավ 1929 թ. նոյեմբերին կայացած Համկ(բ)կ Կենտկոմի պլենումը։ Այն քննարկեց «Դիրեկտիվներ ժողովրդական տնտեսության 1929/30 թվականի կոնտրոլ թվերի մասին» հարցը[1], և ընդունեց «ժողովրդական տնտեսության կադրերի մասին» հատուկ բանաձևը[2]։ Համկ(բ)կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումի որոշումների և դրանցից բխող հրատապ խնդիրները քննարկվեցին Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի պլենումում (1929 թ. նոյեմբեր 18—20), որտեղ օրակարգի հարցերի մեծամասնությունը վերաբերում էր գյուղի սոցիալիստական վերափոխման խնդիրներին[3]։

Պլենումում հատկապես սուր դրվեցին գյուղատնտեսության համար կադրերի պատրաստման և նրանց գյուղի սոցիալիստական վերափոխման աշխատանքներին լայնորեն ներգրավելու հարցերը։ Պլենումի ընդունած «Գյուղատնտեսության զարգացման և սոցիալիստական վերակառուցման հիմնական խնդիրները» բանաձևում նշվում էր, որ հանրապետության գյուղատնտեսության ընդհանուր վերակառուցման բնագավառում դրված բարդ և ծավալուն խնդիրների իրականացումն անվերապահորեն պահանջում է անհապաղ և լուրջ աշխատանք ծավալել գյուղատնտեսությունն արագ տեմպերով նոր, բանվոր դասակարգին նվիրված, որակյալ մասնագետներով ապահովելու ուղղությամբ։ Նշելով այդ բնագավառում տեղ գտած թերությունները (գյուղատնտեսական ֆակուլտետի շրջանավարտների միանգամայն անբավարար քանակը, կադրերի պատրաստման հնգամյա պլանի ակնհայտ անհամապատասխանությունն առկա պահանջներին և այլն), պլենումը գյուղատնտեսական կադրերի պատրաստման աշխատանքները բարելավելու նպատակով Կենտկոմի նախագահությանն առաջարկեց շտապ կարգով վերանայել և վերամշակել գյուղատնտեսական կրթության ամբողջ համակարգը[4]։ Մասնավորապես առաջարկվեց ընդլայնել պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը,

---

1 «ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում», հ. II, էջ 784։

2 Նույն տեղում, էջ 799։

3 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև Մլի կուսարխիվ), ֆ. 1, ց. 13, գ. 18, թ. 50—60։

4 Նույն տեղում, թ. 71—72։

հնարավորություն ստեղծել միութենական բուհերում կազմակերպելու բարձր որակավորման մասնագետների պատրաստման գործը, այդ հարցում լայնորեն կիրառելով կոնտրակտացիան ինչպես պետական միջոցների, այնպես էլ տնտեսական ձեռնարկությունների հաշվին։ Առաջարկվեց նաև գյուղատնտեսական ֆակուլտետին կից կազմակերպել հատուկ դասընթացներ՝ գյուղատնտեսական առանձին ճյուղերի մասնագետների պատրաստման համար, ավելացնել տեխնիկումների թիվը և երկրորդ աստիճանի դպրոցների մի մասը վերափոխել տասնամյակների՝ դրանց տալով գյուղատնտեսական թեքում, կազմակերպել գյուղական երեկոյան դպրոցների լայն ցանց և բարելավել դրանց որակը։ Պլենումը խնդիր էր դնում նաև վերակառուցել գյուղատնտեսական ուսուցման ամբողջ պրոցեսը՝ կազմակերպելով անընդհատ արտադրական պրակտիկա սովետական և կոլեկտիվ տնտեսություններում ու մեքենատրակտորային կայաններում։ Մյուս կողմից, անհրաժեշտ էր համարվում ապագա ուսանողներ ընտրել պրոլետարիատին նվիրված խավերից և ուսման ընթացքում ապահովել նրանց նյութական կարիքները[5]։

Գյուղատնտեսությունը որակյալ կադրերով ապահովելու հարցին զուգահեռ գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրները պահանջում էին ամենալայն գյուղացիական զանգվածների քաղաքական, սոցիալական և կուլտուրական մակարդակի բարձրացում։ Այդ աշխատանքներն ուժեղացնելու համար պլենումը Կենտկոմի նախագահությանն առաջարկեց մշակել կոնկրետ միջոցառումներ (արագացնել բոլոր գյուղական դպրոցների գյուղատնտեսական կողմնորոշումը, կազմակերպել կիրակնօրյա և երեկոյան համալսարաններ ու կուրսեր, հեռակա գյուղատնտեսական ուսուցում, ռադիո-դասընթացներ)։ Ուսուցումն արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկվեց օգտագործել ցուցահանդեսները, կինոնկարները և գյուղատնտեսական գրականությունը։ Ըստ ընդունած որոշման նախատեսվում էր վեց ամիս անց ստուգել պլենումի ընդունած բանաձևի կատարման ընթացքը[6]։

«Կոլտնտեսային շինարարության հերթական խնդիրները» հարցի վերաբերյալ պլենումի ընդունած բանաձևի մեջ առաջարկվում էր նաև պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետին առընթեր կազմակերպել կոլտնտեսային շինարարության ամբիոն։ Կոլտնտեսությունների ցանցը մոտ ապագայում պետք է ապահովվեր հողաշափերով, մեխանիկներով, տեխնիկներով, ինժեներներով, գյուղատնտեսներով ու ուսուցիչներով։ Վերջիններիս օգնությամբ օրինակելի ձևով պետք է կազմակերպվեր կոլտնտեսականների կրթության գործը գյուղական երիտասարդության դպրոցներում։ Նախատեսվում էր կազմակերպել մի շարք կարճատև ու երկարաժամկետ դասընթացներ՝ չքավոր և միջակ կոլտնտեսային աշխատողների համար, միաժամանակ արագ ավարտել գավառային կոլտնտեսային մարմինների կազմակերպումն ու նոր կադրերով ուժեղացնել կոլտնտեսային սիստեմի բոլոր օղակները[7]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումի որոշումը քննարկվեց հանրապետության բոլոր կուսակցական կազմակերպություններում, իսկ կատարման ընթացքը լայնորեն լուսաբանվեց կուսակցական և սովետական մամուլում։

Ամբողջ երկրում ծավալված զանգվածային կոլեկտիվացման տեմպերը կուսակցությանը ռեալ հնարավորություն տվեցին կուլակության սահմանափակման քաղաքականությունից անցնելու նրան որպես դասակարգ վերացնելու քաղաքականությանը։ Հաշվի առնելով այդ հանգամանքը, ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1930 թ. հունվարի 5-ին ընդունեց «Կոլեկտիվացման տեմպի և կոլտնտեսային շինարարությանը պետության կողմից օգնություն ցույց տալու միջոցառումների մասին» որոշումը[8]։ Այս առիթով ՀամԿ(բ)Կ Կենտկոմը վե-

---

5 Նույն տեղում, թ. 72։

6 Նույն տեղում, թ. 73։

7 Նույն տեղում, գ. 18, թ. 116։

8 «ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում», հ. II, էջ 841։

բանալեց երկրի տարբեր շրջանների համար կոլտնտեսային շինարարության հնգամյա պլանը և հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, սահմանեց կոլեկտիվացումն ավարտելու մոտավոր ժամկետներ։ Բացի այդ, որպես կոլտնտեսային շարժման գլխավոր ձև Կենտկոմն առաջ մղեց գյուղատնտեսական արտելները և նախանշեց կոլտնտեսությունների ղեկավար կադրերի պատրաստման գործին նպաստող միջոցառումներ։ «Նկատի ունենալով կադրերի հատուկ նշանակությունը,— ասված էր որոշման մեջ,— Կենտկոմը առաջարկում է Միության հողժողկոմատին, Կոլտնտկենտրոնին և կուսակցության մարզային կոմիտեներին՝ արագացնել կոլտնտեսային կադրերի պատրաստման և կոլտնտեսությունները կադրերով ապահովելու աշխատանքը, դրա համար ստեղծելով կարճատև դասընթացների լայն ցանց, կարճատև դասընթացներում ընդգրկել առաջին հերթին կոլտնտեսային շարժման առաջ քաշված պրակտիկ աշխատողներին՝ գյուղացիների թվից, և բանվորական բրիգադաների այն անդամներին, որոնք իրենց դրսևորել են որպես կոլտնտեսային շարժման կազմակերպիչներ»[9]։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և նրա տեղական կազմակերպությունները, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հունվարյան պլենումի որոշումները կենսագործելու նպատակով, կոնկրետ միջոցառումներ ձեռնարկեցին ընթացիկ գյուղատնտեսական կամպանիաների ղեկավարումն ապահովելու ուղղությամբ և, միաժամանակ, լայն ճակատով աշխատանք ծավալեցին գյուղի համար նոր կադրեր պատրաստելու, եղած մասնագետների, համապատասխան բուհերի, տեխնիկումների, կարճատև ու երկարաժամկետ դասընթացների շրջանավարտների ուժերն ավելի արդյունավետ օգտագործելու ուղղությամբ։ Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինստիտուտներն ու տեխնիկումները սեղմ ժամկետներում չեն կարող բավարարել գյուղատնտեսական կադրերի հարաճուն պահանջարկը, ՀԿ(բ)Կ Կենտկոմը և հանրապետության կառավարությունը տեղական մարմիններին ցուցում տվին լրջորեն զբաղվելու եղած մասնագետների վերապատրաստման հարցերով[10]։ Կենտկոմի ցուցումով և նրա ապարատի աշխատողների ակտիվ մասնակցությամբ հանրապետության բոլոր գավառներում 1930 թ. հունվարի 15-ից մինչև փետրվարի 15-ը կազմակերպվեցին գյուղատնտեսության մասնագետների վերապատրաստման դասընթացներ։ Այնտեղ դասախոսություններ կարդալու համար Երևանից գործուղվեցին համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի ավարտական կուրսի 105 ուսանողներ և կուսակցական դպրոցի 54 ունկնդիրներ։ Դասընթացներում, բացի մասնագիտական առարկաներից, ուսումնասիրվում էին կոլեկտիվացման մասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հունվարի 5-ի որոշումը և կոլտնտեսային շարժման վերաբերյալ կուսակցության ու կառավարության այլ դիրեկտիվ փաստաթղթերը։ Այդ վիթխարի աշխատանքների ծավալի մասին մոտավոր պատկերացում կարող է տալ այն փաստը, որ միամսյա դասընթացներն ավարտած միայն ագրոլիազորների քանակը հասավ 1375 մարդու[11]։

Սակայն նկատի ունենալով, որ կարճատև դասընթացները չէին կարող ապահովել մասնագետների բարձր որակավորումը, որոշվեց կազմակերպել համեմատաբար երկարաժամկետ (վեցամսյա և միամսյա) դասընթացներ՝ գյուղատնտեսական արտադրության առանձին ճյուղերի գծով։ 1931 թ. անասնաբույժների, զոոտեխնիկների, մեղվաբույծների, թռչնաբույծների, ձիաբույծների և այլ դասընթացներն ավարտեցին 819 գյուղատնտեսական աշխատողներ[12]։ Կարևոր միջոցառում էր նաև նոր պահանջներին համապատասխան գյուղական դպրոցների ուսուցման համակարգի վերակառուցումը, ըստ որի երկրորդ աստիճանի դպրոցների մի մասը վերափոխվեց գյուղատնտեսական թե-

---

9 Նույն տեղում, էջ 843։

10 Մլի կուսարխիվ, ֆ. 1, ց. 15, գ. 38, թ. 23։

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում, ց. 10, գ. 273, թ. 2։

քումով տասնամյաների, ստեղծվեց երկամյա գյուղատնտեսական դպրոցների լայն ցանց, գյուղատնտեսական աշխատողների համար կազմակերպվեցին կիրակնօրյա և երեկոյան համալսարաններ ու ռադիո-դասընթացներ։ Ծառայության մեջ գտնվող գյուղացի կարմիրբանակայինների համար կազմակերպվեցին հատուկ խմբակներ, որտեղ նրանք ձեռք էին բերում գյուղատնտեսական գիտելիքներ, սովորում մեքենա վարել[13]։

Կուսակցությունն ու կառավարությունը մեծ ուշադրություն էին դարձնում մասնավորապես ազգային կադրերի աճեցման խնդրին։ 1920 թ. դեկտեմբերին ստեղծված Երևանի պետական համալսարանն իր գոյության 10 տարիների ընթացքում պատրաստեց բարձրագույն կրթությամբ 934 մասնագետ, այդ թվում 283 գյուղատնտես, 137 բժիշկ, 47 ջրաշինարար-ինժեներ, 254 մանկավարժ և 213 տնտեսագետ։ Նրանց մեծամասնությունն աշխատանքի ուղարկվեց հանրապետության գավառներն ու շրջանները[14]։

ՀԱՄԿ(բ)Կ Անդրկովկասի երկրկոմի 1928 թ. հունիսի որոշմամբ Երևանում ստեղծվեց անդրկովկասյան անասնաբուժական ինստիտուտ, ուր տեղական կուսակցական և սովետական մարմինների ուղեգրերով ընդունվեց 115 դիմորդ։ 1930 թ. այդ ինստիտուտի բազայի վրա ստեղծվեց անասնաբուժական ինստիտուտը։ Մեկ տարի անց երկու ինստիտուտները վերամիավորվեցին որպես անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտ։ Նույն տարում կազմակերպվեց նաև ինստիտուտի հեռակա բաժինը, որն ընդունում էր 111 դիմորդ։ Մեկ տարի անց այդ թիվը կրկնապատկվեց[15]։

Ղեկավարվելով ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան (1929 թ.) պլենումի որոշումներով և հաշվի առնելով ազգային կադրերի օրավուր աճող պահանջարկը՝ Անդրկովկասյան Ֆեդերացիայի ժողկոմխորհը 1930 թ. հուլիսի 14-ին հատուկ որոշում ընդունեց բարձրագույն և միջնակարգ կրթության համակարգի վերակառուցման մասին[16]։ Ելնելով այդ որոշումից՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմն ու կառավարությունն իրականացրին հանրապետության բարձրագույն և միջնակարգ կրթության հետագա զարգացմանը վերաբերող մի շարք միջոցառումներ։ Պետհամալսարանի շինարարական, գյուղատնտեսական, բժշկական և կոոպերատիվ-տնտեսագիտական ֆակուլտետների բազայի վրա ստեղծվեցին ինքնուրույն ինստիտուտներ, որոնք հանձնվելով համապատասխան ժողկոմատների իրավասությանը, դարձան նոր ազգային մտավորականության ստեղծման լավագույն օջախներ[17]։

Ինստիտուտներում տարեցտարի ուսանողության քանակը աճում էր։ Այսպես, գյուղատնտեսական ինստիտուտում 1930 թ. սովորում էին 337 ուսանող, մեկ տարի անց՝ 402, իսկ 1932-ին՝ 610 ուսանող։ Անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում այդ երեք տարիների ընթացքում ուսանողների քանակը 600-ից հասավ 1077-ի[18]։ Դրան զուգահեռ Հայաստանից երկրի այլ քաղաքների գյուղատնտեսական ինստիտուտները սովորելու էին ուղարկվել 84 պատանիներ ու աղջիկներ[19]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ 1931 թ. հանրապետությունում ստեղծվեց 20 նոր տեխնիկում ու մասնագիտացված դպրոց։ Այդ դպրոցներից 8-ն ունեին անասնապահական, 2-ը՝ բամբակագործական, իսկ մնացած 10-ը՝ տեխնիկական կուլտուրաների մշակության և այգեգործական թեքում[20]։ Մասնագիտաց-

---

13 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև ՀՍՍՀ ՀՀՍՇԿՊԱ), ֆ. 23, ց. 1, գ. 44, թ. 1։

14 «Հայկ. ԽՍՀ գառավարության հաշվետվության նյութերը խորհուրդների 8-րդ համագումարի առթիվ (1929—1934)», Երևան, 1935, էջ 117։

15 ՄԼԻ կուսարխիվ, ֆ. 1, ց. 19, գ. 273, թ. 3։

16 Նույն տեղում, թ. 1։

17 ՀՍՍՀ ՀՀՍՇԿՊԱ, ֆ. 113, ց. 1, գ. 346, թ. 1—2։

18 ՄԼԻ կուսարխիվ, ֆ. 1, ց. 19, գ. 273, թ. 1։

19 Նույն տեղում, թ. 6։

20 Նույն տեղում, թ. 1։

ված ուսումնական հաստատությունների թիվը ևս տարեցտարի ավելանում էր։ 1930 թ. Հայաստանում կար 11 գյուղատնտեսական տեխնիկում, որտեղ սովորում էր 891 ուսանող. 1931 թ. 33 տեխնիկումներում և մասնագիտացված դրպոցներում արդեն սովորում էին 3127 ուսանողներ։ 1932 թ. արդեն գործում էր 35 տեխնիկում ու մասնագիտացված դպրոց՝ 4790 սովորողներով։ Գյուղատնտեսական կադրերի աճող պահանջը բավարարելու նպատակով որոշվեց 1932 թ. սկսած կազմակերպել 3 հեռակա տեխնիկում՝ 1270 ուսանողով[21]։

1930—1932 թթ. Հայկական ՍՍՀ-ում գյուղատնտեսական բուհերում և տեխնիկումներում կադրերի պատրաստման աճը կարելի է դիտարկել հետևյալ աղյուսակների միջոցով[22]։

Աղյուսակ № 1

Գյուղատնտեսական կադրերի պատրաստումը Հայկական ՍՍՀ բուհերում (1930—1932 թթ.)

№	Մասնագիտությունը	Ուսանողների քանակը			Շրջանավարտների քանակը		
		1930 թ.	1931 թ.	1932 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
1	գյուղատնտես	337	402	610	65	83	90
2	անասնարույժ	385	530	630	—	—	94
3	անասնարույծ	215	847	447	—	41	31
	ընդամենը	937	1279	1687	65	124	215

Աղյուսակ № 2

Գյուղատնտեսական կադրերի պատրաստումը Հայկական ՍՍՀ տեխնիկումներում (1930—1932 թթ.)

№	Տեխնիկումի անվանումը	Սովորողների քանակը			Շրջանավարտների քանակը		
		1930 թ.	1931 թ.	1932 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
1	2	3	4	5	6	7	8
1	Երևանի անասնաբուժական	—	120	190	—	—	22
2	Երևանի շերամաբուժական	—	120	160	—	—	35
3	Երևանի այգեգործական	205	240	216	80	62	44
4	Երևանի պտղաբանջարային	—	—	35	—	—	—
5	Երևանի գյուղշին	—	40	80	—	—	—
6	Երևանի գյուղմեխանիզացիայի	—	120	230	—	—	—
7	Երևանի հողաշինարարական	41	120	156	41	—	—
8	Երևանի ագրոքիմիական	—	40	80	—	—	—
9	Երևանի բույսերի պահպանության	—	35	70	—	—	—
10	Երևանի անասնաբուժական	40	192		—	—	—
11	Լենինականի դաշտավարական	192	250	244	—	46	38

21 Նույն տեղում, թ. 2։

22 Աղյուսակները կազմված են հեղինակի կողմից, ՀԿ(բ)Կ Կենտկոմի կադրերի բաժնի հաշվետվության նյութերի հիման վրա (ՄԼԻ կուսարխիվ, ֆ. 1, ց. 19, գ. 273, թ. 1—19)։

1	2	3	4	5	6	7	8
12	Ապարանի անասնաբուծական	35	70		—	—	—
13	Դիլիջանի խոզաբուծական	—	35		—	—	—
14	Ղուրդուղուլիի (Մեծ Արմավիր) բամբակագործական	94	194	315	—	35	74
15	Վաղարշապատի (Էջմիածին) բամբակագործական	—	145	264	—	—	66
16	Ղամարլուի (Աբուռաշատ) բամբակագործական	—	40	120	—	—	35
17	Մեղրիի շերամաբուծական	—	70	105	—	—	—
18	Իջևանի ծխախոտագործական	—	84	119	—	—	—
19	Օշականի այգեգործական	—	40	115	—	—	35
20	Ստեփանավանի կաթնատնտեսական	88	178	252	2	28	37
21	Գորիսի կաթնատնտեսական	—	120	136	—	—	—
22	Նոր Ախտայի (Հրազդան) կաթնատնտեսական	—	73	108	—	—	—
23	Նոր Բայազետի (Կամո) կաթնատնտեսական	—	80	115	—	—	—
24	Քեշիշքենդի (Եղեգնաձոր) ոչխարաբուծական	—	40	115	—	—	—
25	Ղարաքիլիսայի (Կիրովական) անասնաբուծական	40	120	160	—	—	35
26	Սիսիանի անասնաբուծական	—	40	110	—	—	35
	ընդամենը	597	2324	3814	121	171	491

№ 2 աղյուսակից երևում է, որ տեխնիկումներն այս կամ այն շրջաններում ստեղծվում էին ելնելով տվյալ շրջանի գյուղատնտեսության զարգացման առանձնահատկություններից։

Քանի որ ինստիտուտները, տեխնիկումները և մասնագիտացված դպրոցները հնարավորություն չունեին անհապաղ ապահովել գյուղատնտեսության պահանջմունքները, 1931 թ. կազմակերպվեցին գյուղատնտեսական մասնագետների 6-ամսյա դասընթացներ, այդ թվում՝ անասնաբուժական (135 ունկընդիր), անասնաբուծական (180 ունկնդիր), թռչնաբուծական (120 ունկընդիր), ճագարաբուծական (40 ունկնդիր), ձիաբուծական (60 ունկնդիր) և այլն։ 1931 թ. սկսած մեծ աշխատանք ծավալվեց կարճատև (10 օրից մինչև 3 ամիս) դասընթացներում մասսայական կադրերի պատրաստման ուղղությամբ։ Դրանցում միայն հանրապետության հողժողկոմատի գծով պատրաստվեց և վերապատրաստվեց 1259 մարդ[23]։

Նույն թվականի ամռանը Երևանում կազմակերպվեցին շրջանների գյուղատնտեսական բաժինների վարիչների պատրաստման երկամսյա դասընթացներ, որոնց մասնակցում էր 19 մարդ։ Միաժամանակ Երևանի, Թբիլիսիի և Մոսկվայի հատուկ դասընթացներում կերային կուլտուրաների սիլոսացման գծով մասնագիտանում էին հանրապետության 34 ներկայացուցիչներ։ 1931 թ. գարնանը և ամռանը Հայաստանի մի շարք շրջաններում առաջին անգամ կազմակերպվեցին գյուղատնտեսական մեքենաների վարորդների դասընթացներ։

Գյուղատնտեսության համար կադրեր սկսեցին պատրաստել նաև բանֆակները։ Նշված ժամանակաշրջանում հանրապետությունում գործում էին Երևանի, Ղափանի և Կիրովականի բանֆակները, որոնցում սովորողների ընդ-

23 Նույն տեղում։

հանուր թիվը 1931 թ. կազմեց 540, իսկ 1932 թ.՝ արդեն 980 մարդ։ Գյուղատնտեսության գծով առաջին շրջանավարտները (35 մարդ) 1931 թ. աշխատանքի ուղարկվեցին գյուղերը[24]։

Հանրապետությունում, ինչպես նշվեց, 1931 թ. կազմակերպվել էին տարբեր մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման և վերապատրաստման կարճատև դասընթացներ։ 1932 թ. 10 օրից մինչև 3 ամիս տևողությամբ այդ դասընթացներում, միայն հանրապետության հողժողկոմատի գծով պատրաստվեց 2160 մարդ. այդ թվում բույսերի պաշտպանության գծով՝ 69, գյուղմեքենաներ վերանորոգողներ՝ 30, վարորդներ՝ 477, սիլոսավորման աշխատանքների գծով՝ 285, հովիվներ՝ 127, ժանտախտի դեմ պայքարող՝ 140, մեղվաբույծներ՝ 30, ճագարաբույծներ՝ 20 մարդ և այլն[25]։

Գյուղատնտեսական կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ մեծ աշխատանք ծավալվեց նաև հանրապետության կոլտնտկենտրոնը։ Չնայած ֆինանսական դժվարություններին, արդեն 1931 թ. կարճատև և երկարաժամկետ դասընթացների միջոցով հանրապետությունում պատրաստվել էր 14911 մասնագետ, պլանով նախատեսված 12830-ի դիմաց։ Նրանցից 121-ը ավարտել էին Լենինականի, Վաղարշապատի (Էջմիածին) և Բաքվի կոլտնտեսությունների նախագահների միամյա կուրսերը։ Այդ կուրսերում սովորողների 20,2%-ը կանայք էին[26]։ Հանրապետության կոլտնտկենտրոնի գծով Լենինականում, Վաղարշապատում և Բաքվում գործող կոլտնտեսությունների նախագահների միամյա դպրոցները 1932 թ. ավարտեցին 341 մարդ, իսկ ընդհանուր առմամբ կոլտնտկենտրոնը գյուղատնտեսության պահանջները բավարարելու համար 1932 թ. պլանավորել էր պատրաստել և վերապատրաստել 30000 մասնագետ[27]։

Բարձր որակավորման գյուղատնտեսական կազմակերպիչների պատրաստման կուրսեր սկսեցին գործել նաև Երևանի գյուղատնտեսական ինստիտուտին կից։

Հանրապետությունում ցածր մակարդակի վրա էր գտնվում սովխոզների համար կադրերի պատրաստման գործը։ Դա բացատրվում էր նրանով, որ մի շարք սովխոզներ («Անասնաբույծ», «Ոչխարաբույծ», «Խոզաբույծ») գտնվում էին համապատասխան վարչական մարմինների ենթակայության տակ, որոնք այդ հարցով լրջորեն չէին զբաղվում։ Սակայն երբ ՀԿ(բ)Կ Կենտկոմը ժողովրդական տնտեսության բոլոր օղակների համար կադրերի պատրաստման գործը վերցրեց իր անմիջական հսկողության տակ, դրությունն զգալիորեն փոխվեց։ Սովխոզներում սկսեցին գործել կթվորուհիների, անասնապահների, հովիվների, դաշտային բրիգադիրների, ոչխարաբույծների, մեղվաբույծների և այլ գյուղատնտեսական մասնագիտությունների միմասյա ու եռամսյա դասընթացներ։ 1931 թ. այդ դասընթացներն ավարտեցին միջին և ցածր որակավորման 1100 աշխատող։ 1932 թ. դրանց թիվը հասավ 10-ի, իսկ պատրաստվող կադրերի քանակը՝ 1410-ի։ Այդ նույն թվականին 6-ամսյա դասընթացներում նախատեսվում էր պատրաստել 465 դաշտավար, 84 տրակտորիստ, 438 վարորդ, 100 ծխախոտագործ, 395 ձիաբույծ, 1890 բանջարաբույծ, 480 այգեգործ և այլն։ 1931 թ. «Անասնաբույծ» սովխոզի համար Լենինգրադում պատրաստվեց և վերապատրաստվեց չորս մասնագետ՝ դիրեկտորի պաշտոն վարելու համար, իսկ 1932 թ. «Ոչխարաբույծ» և «Խոզաբույծ» սովխոզներից դիրեկտորական դասընթացներում սովորելու համար Մոսկվա ուղարկվեց 2 մարդ։ Այդ նույն տարում Երևանում բացվեց 6-ամսյա դիրեկտորական դասընթացներ, որոնցում ընդգրկվեց 20 մարդ։ 1931/1932 ուսումնական տար-

---

24 Նույն տեղում, թ. 6։
25 Նույն տեղում, թ. 8։
26 Նույն տեղում։
27 Նույն տեղում, թ. 10։

վանից երկրի գյուղատնտեսական ինստիտուտներում ստեղծվեցին սովխոզների համար կադրերի պատրաստման հատուկ ֆակուլտետներ[28]։

Հայաստանի կոմկուսը մեծ աշխատանք կատարեց նաև հանրապետության ջրային տնտեսության համակարգը որակյալ կադրերով համալրելու ուղղությամբ, որտեղ որակյալ մասնագետների խիստ կարիք էր զգացվում։ Այդ նպատակով Երևանի շինարարական ինստիտուտում ստեղծվեց հիդրոտեխնիկական ֆակուլտետ՝ 96 ուսանողով։ Բացի այդ, 30 մարդ ուղարկվեց Թբիլիսիի և 5 մարդ՝ Տաշքենդի մելիորացիայի ինստիտուտներում սովորելու։

Միջին որակավորման կադրերի պատրաստման համար Երևանում սկսեց գործել մելիորատիվ տեխնիկում՝ 244 ուսանողով։ Ցածր որակավորման կադրեր սկսեցին պատրաստվել Հայջրտնտեսության վարչության կազմակերպած ջրամատակարարման աշխատողների և նորմավորողների միամսյա դասընթացներում։

1930—1932 թթ. ընթացքում Երևանի շինարարական ինստիտուտի հիդրոտեխնիկական ֆակուլտետը, Երևանի մելիորատիվ տեխնիկումը և Սովետական Միության այլ քաղաքների մելիորատիվ ինստիտուտներն ավարտեցին ու անցան աշխատանքի մոտ 300 բարձր և միջին որակավորման ջրային տնտեսության մասնագետ[29]։

Մեծ աշխատանք կատարվեց մեքենատրակտորային կայանների համար կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ։ Հատկապես մեծ ուշադրություն նվիրվեց բարձր և միջին որակավորման մեխանիզատորների պատրաստմանը։ 1931 թ. հանրապետությունն ուներ 4 մեքենատրակտորային կայան, որոնց կից ստեղծվեցին գյուղական մեխանիզատորների տարբեր դասընթացներ։ 1932 թ. ՄՏԿ-ների քանակը հանրապետությունում հասավ 7-ի, իսկ դասընթացներում արդեն սովորում էր 1428 մարդ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը հատուկ ուշադրություն նվիրեց ՄՏԿ-ները ղեկավար կադրերով համալրելու հարցին։ Արդյունքն այն եղավ, որ ՄՏԿ-ներն ուղարկվեցին մասնագիտական պատրաստություն ունեցող փորձված կուսակցական և պետական աշխատողներ[30]։

Գյուղն ուներ նաև ոչ գյուղատնտեսական մասնագետների մեծ կարիք։ 1930—1932 թթ. ընթացքում շնորհիվ կուսակցության ձեռնարկած միջոցառումների, պատրաստվեցին և գյուղական շրջաններն աշխատանքի ուղարկվեցին 400-ից ավելի հաշվապահ և հարյուրավոր այլ մասնագետներ՝ պանրագործներ, լաբորանտներ, գյուղատնտեսական հումք մթերողներ, հաշվետարներ, պլանավորողներ, վիճակագիրներ և այլն[31]։ Համատարած կոլեկտիվացման ամենաեռուն ժամանակաշրջանում Հայաստանի կոմկուսի Կենտկոմը մոբիլիզացրեց և գյուղական շրջանները կուսակցական ու սովետական աշխատանքի ուղարկեց ավելի քան 1000 աշխատող[32]։

Գյուղատնտեսական ղեկավար կադրերի պատրաստման գործում մեծ դեր խաղաց Երևանում 1923 թ. մինչև 1932 թ. գործող կոմունիստական համալսարանը, որը 1932 թ. վերափոխվեց հայկական բարձրագույն կոմունիստական գյուղատնտեսական դպրոցի՝ երկամյա և եռամյա դասընթացներով։ Դպրոցը հայկական և ռուսական բաժիններից բացի ուներ նաև ադրբեջանական բաժին։

Դժվար է մեկ հոդվածի սահմաններում ամփոփել և լուսաբանել այն հրսկայական աշխատանքը, որ առաջին հնգամյակի տարիներին ծավալվեց Հայաստանի կոմկուսը գյուղատնտեսական կադրերի պատրաստման ուղղությամբ։ Աշխատանք, որը նպաստեց ոչ միայն ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլանով նախատեսված առաջադրանքների հաջող կատար-

---

28 Նույն տեղում, թ. 12։

29 Նույն տեղում, թ. 15։

30 Նույն տեղում, թ. 18։

31 Նույն տեղում, թ. 16։

32 «Լենինյան ուղի», 1932, № 6—7, էջ 3։

մանը, այլև գյուղի սոցիալիստական վերակառուցմանը, գյուղում կուլտուրական հեղափոխության հաղթանակին։ Այն հիմք դրեց գյուղում նոր, սոցիալիստական մտավորականության զարգացման գործին և ունեցավ ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական ու քաղաքական խոշոր նշանակություն, որովհետև առաջին հնգամյակում ստեղծվեց այն նպաստավոր հողը, որին խարսխվեց սոցիալիզմի վերջնական հաղթանակը մեր երկրում։

ПОДГОТОВКА СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ КАДРОВ В АРМЕНИИ В ГОДЫ ПЕРВОЙ ПЯТИЛЕТКИ

МЯСНИК АРУТЮНЯН

Резюме

В борьбе за выполнение первого пятилетнего плана развития народного хозяйства СССР громадная роль принадлежала народной интеллигенции. В связи с гигантским размахом социалистического строительства перед партией и государством во весь рост встала проблема подготовки кадров, в которых особо остро нуждалась деревня.

Коммунистическая партия Армении и правительство республики, руководствуясь директивами партии и правительства, осуществили крупные мероприятия по подготовке кадров для всех отраслей народного хозяйства республики.